

1865—1870



ՎԵՐՈՅԻՇԵԱԼ տեղեկութիւններով և անուանա-
ցանկով՝ կը լրանայ ցայնվայր (1863) Մանչէս-
դըրի մէջ գտնուող Հայերուն վրայ մինչեւ մեր օրերն
հասած վաւերական ծանօթութեանց շարքը :

Ասոնց կէսը՝ Կ. Պոլիսէն և Զմիւռնայէն Մանչէս-
դըր երթեւեկողներ էին, միւս կէսը մնայուն կերպով հոն
գործողներ՝ իբրեւ ներկայացուցիչ Կ. Պոլիսի և Զմիւռ-
նայի իրենց կենդրոնական տուներուն : Իրենցմէ ամէնէն
երկարատեւ Մանչէսդըր մնացողներն են .—

Յովհաննէս Յակոբեան՝ վերոյիշեալ ցանկին թուա-
կանէն՝ 35 տարի, Մարտիրոս Թորքատեան՝ նոյնպէս՝ 40
տարի, Կարապետ Եղիազարեան՝ դարձեալ նոյնպէս՝ 45
տարի, երեքն ալ՝ քաջքաջ համբերութեամբ և աշխա-
տութեամբ այդ երկարատեւ պանդխտութեանց միջոցին
քաջ ուսած անգղիական գործնական լեզուն և գործի
աշխարհը, տիրացած բաւական հարստութեան⁽¹⁾ և ան-

(1) Զարմանալի՛ կը թուի Թորքատեան Մարտիրոսի նման գործասէր
ու գործազէտ անձնաւորութեան մը՝ Հնդկաստանի կամ ա՛յլ աշխարհի
մեծ հրապարակներու մէջ գործ մը չբանալը քառասուն տարուան երկար
այդ միջոցին, Անգղիայի պէս դիւրահաղորդ երկիրի մը մէջ ապրելով.
Թուի մանրամասնութեամբ և փիլիսոփայութեամբ ալ պէտքէն աւելի զբա-
ղած է ինք հին մըջիւնը, որով չձգեց աւելի մեծ գործ և հարստութիւն:
Կըսուի թէ միջոց մը՝ առաջարկեր է ի Կ. Պոլիս Յակոբեանց և